ՀՏԴ 82-9(479.243) *Լրատվություն*

Բալայան Սամվել
Արցախի պետական համալսարան,
բանասիրական ֆակուլտետ,
գրականության և լրագրության ամբիոնի ասիստենտ

ՇԱՐԺՄԱՆ 30-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՄԲ

Samvel Balayan

LIGHTING OF ACTIVITIES DEDICATED TO THE 30TH ANNIVERSARY OF KARABAKH MOVEMENT ON SOCIAL TELEVISION OF ARTSAKH

Media representatives believe that the apparent transparency of television is due to broader extention of the Internet and the information existing there. Artsakh's public television with its current challenges, has great experience in uncovering political and public events. The events of the 30th anniversary of the Karabakh Movement had broad enrollment. 30 years ago the ability to become a single fist, the will and existing difficulties have been reflected on Artsakh Public Television. The goal was one - remaining faithful to the spirit of 30th anniversary celebrations to keep the national dignity in the minds of generations.

***Key words**: informative policy, conflict, TV audience, Kharabakh movement, reportage, journalism*

Самвел Балаян

ОСВЕЩЕНИЕ МЕРОПРИЯТИЙ, ПОСВЯЩЕННЫХ 30-ЛЕТИЮ КАРАБАХСКОГО ДВИЖЕНИЯ НА ОБЩЕСТВЕННОМ ТЕЛЕВИДЕНИЕ АРЦАХА

Представители медиасферы убеждены в том, чтобы телевидение стало очевидно прозрачным, способствовало более широкому распространению сети и имеющейся в ней информации. Общественное телевидение Арцаха, с учетом актуальных вызовов, имеет большой опыт освещения политико-общественных событий. Мероприятия к 30-летию Карабахского Движения были достаточно обширными с точки зрения охвата. 30 лет назад умение собраться в кулак, сила воли и имеющиеся трудности отразились в эфире Арцахского общественного телевидения. Цель была следующая: сохранить национальное достоинство ярким в мыслях поколений.

***Ключевые слова**: информационная политика, конфликт, телеаудитория, Карабахское движение, репортаж, журналистика.*

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ պատմական իրադարձությունները, պատերազմներն ու հակամարտությունները աշխարհի ցանկացած մեդիա նախագծի հիմնական մասն են կազմում: Հենց նման բովանդակությամբ լրահոսը աշխարհի առաջատար հեռուստաալիքների տեղեկատվական քաղաքականության հիմքն է: Հեռուստալսարանն, ամեն դեպքում, գնահատում է իր անցած ճանապարհն ու իր հեռուստաէկրանին հիշողությունները թարմացնող տեղեկատվություն է փնտրում: Այդպես էր նաև Արցախի Հանրային հեռուստատեսության դիտողների դեպքում: Այդ մարդկանցից շատերը 1988-ի փետրվարյան օրերին ենթարկվել են քաղաքական ճնշումների, բռնությունների, սակայն անկեղծ հավատում էին, որ բռունցքվելու միջոցով էր հնարավոր հասնել արդար պահանջի լուծմանը: Եվ չէին սխալվում: 88-ի փետրվարը սպասված էր, բայց հարուստ անսպասելի զարգացումներով: Այն իրադարձությունների կերպարանափոխումն էր՝ համահունչ նոր մարտահրավերներին, նոր հնարավորություններին:

Արցախի հեռուստատեսության ծնունդը համընկավ արցախահայության ազգային ազատագրական պայքարի նոր փուլի մեկնարկի հետ: Նորաստեղծ հեռուստատեսությունը դարձավ Ղարաբաղյան շարժման խոսափողն ու գաղափարախոսը: Հեռուստատեսության կայացման գործընթացը, որին էական նպաստ բերեցին Հայաստանի հեռուստատեսությունն ու Երևանից Ստեփանակերտ գործուղված մասնագետները, ընթանում էր խորհրդային և ադրբեջանական ուժային կառույցների կողմից ստեղծվող խոչընդոտների, մարզում հայտարարված արտակարգ դրության պատճառով մտցված արգելքների և սահմափակումների պայմաններում: Հեռուստահաղորդակի Շուշիում գտնվելու պատճառով, որն այդ ժամանակ հիմնականում

ադրբեջանցիներով էր բնակեցված, հեռուստատեսության աշխատանքը լիովին կախված էր ադրբեջանցիների քմահաճույքներից և պարբերաբար ընդհատվում էր: Չնայած դժվարություններին և հալածանքներին, հեռուստատեսությունն այդ փուլում պատվով կատարեց իր առաքելությունը[1]:

Արցախյան շարժման 30-ամյակի միջոցառումները Արցախի Հանրայինը լուսաբանել է հենց սկզբից, առաջին նյութերի շարքում Ղարաբաղյան շարժման 30-ամյակի տոնակատարությունների կազմակերպման պետական հանձնաժողով ստեղծելու լուրն էր: Պետական հանձնաժողովը ձևավորվել է հանրապետության նախագահի հրամանով՝ հոբելյանական միջոցառումները պատշաճ կազմակերպելու համար[2]: Ընդգրկված էին տարբեր գերատեսչությունների ու զանգվածային լրատվամիջոցների պատասխանատուներ, շրջվարչակազմերի ղեկավարներ, շարժման ակտիվիստներ: Հանձնաժողովի անդրանիկ նիստը գումարվել է նոյեմբերի 23-ին՝ նախագահությամբ Արցախի խորհրդարանի ղեկավար Աշոտ Ղուլյանի: Հանրային հեռուստատեսությունը նիստը լուսաբանել է Օր լրատվական ծրագրի շրջանակներում, և շուրջ 2.30 րոպեի ընթացքում հեռուստատադիտողը հնարավորություն ուներ նախնական պատկերացում կազմելու սպասվող միջոցառումների մասին[3]:

Արցախյան շարժումը՝ Մայր Հայրենիքին վերամիավորվելու խնդիրը շատ ավելի հին պատմություն ունի: Այդ գնահատականը, թերևս, տվել են շարժման առաջամարտիկները: «Օր» հավելվածի շարքով՝ մինչև փետրվարի 20-ը, ըստ շրջանների ի մի են բերվել 30 տարվա հուշերը՝ հենց առաջին ձեռքից՝ Շարժման ակտիվիստներից: 10 րոպեանոց հատուկ ռեպորտաժները եթեր են հեռարձակվել «Օր» ծրագրի գլխավոր թողարկումից անմիջապես հետո:

Շարժման 30-ամյակի միջոցառումները լայնորեն լուսաբանել է «Օր» լրատվական ծրագիրը: Փետրվարի 12-ին առաջին մարդաշատ հանրահավաքները անցկացվել են Մարտունիում ու Հադրութում: Հանրահավաքներ, նաև միջոցառումների հագեցած ցանկով շարժման 30-ամյակը նշել են հանրապետության բոլոր շրջաններում, հիշել են նրանց անունները, ում ջանքերով տասնամյակներ շարունակ ճնշված ազգային իղձերը 88-ին նորից ու նորովի հառնեց: Արցախի Հանրային հեռուստատեսության Օր լրատվական ծրագրի լրագրողները լուսաբանել են այդ միջոցառումները[4]: Հեռուստատեսության ստեղծագործական և տեխնիկական առավել մեծ թիմ ներգրավվել էր շարժման 30-ամյակի գլխավոր միջոցառումը լուսաբանելու համար:

1988-ի փետրվարի 13-ին արցախահայությունը ոտքի կանգնեց ու թույլ չտվեց, որ Բաքվից ժամանած ղեկավար կազմի մասնակցությամբ ու պահանջով ԼՂԻՄ բյուրոների ընդլայնված նիստ գումարվեր ու դատապարտեր Արցախը Հայաստանին վերամիավորելու պահանջը: Այդ իրադարձությունից 30 տարի անց Վերածննդի հրապարակում 88-ի հերոսներն էին՝ Արցախի գործող ու նախկին նախագահների, բարձրաստիճան պաշտոնյաների և նոր կարգախոսներով, ու նույնքան ոգեւորված նոր սերնդի հետ: «Օր» լրատվականի նկարահանող 2 խմբերը աշխատել են վաղ առավոտից՝ նպատակ ունենալով Ստեփանակերտի գլխավոր փողոցներում ու հրապարակում տիրող տրամադրությունները նույնկերպ հաղորդել հեռուստալսարանին: Արցախի պետական համալսարանից մեկնարկած միջոցառումն ու երթը լուսաբանվել է առանձին ռեպորտաժում[5], Վերածննդի հրապարակի տրամադրություններն արտացոլվել ու գնահատականները հնչել են մեկ այլ ռեպորտաժում[6]:

Փետրվարի 20-ին, Արցախի Վերածննդի օրը, արցախյան շարժմանը նորովի անդրադարձ կատարվեց: Այդ օրվա եթերում ամբողջությամբ շարժման ոգին էր թեվածում, հիշողություններով կիսվել են ավագ սերունդը, իրենց պարտավորությունների մասին էլ խոսել են նոր սերնդի ներկայացուցիչները: Եթերային ամենադիտարժան հատվածը, թերևս, արցախյան շարժման 30-ամյակին նվիրված ֆիլմի ցուցադրությունն էր զբաղեցնում: Ֆիլմի նկարահանման նախապատրաստական աշխատանքները մոտ երկու ամիս առաջ են սկսվել, Հանրային հեռուստատեսության ղեկավարության պատվերով[7]:

[1] http://artsakhtv.am/am/about-us
[2] http://www.president.nkr.am/am/news/lawsOrders/3750/
[3] https://www.youtube.com/watch?v=7Ugv21QIpHk
[4] http://www.artsakh.tv/am/news/show/13060
[5] http://www.artsakh.tv/am/news/show/13062
[6] http://www.artsakh.tv/am/news/show/13063
[7] https://www.youtube.com/watch?v=Jfuc4jlUDmc

Ստեղծագործական կազմում «Օր»ր լրատվականի լրագրող Նորայր Հովսեփյանն էր, հանրայինի գլխավոր ռեժիսոր Հրայր Ավետիսյանն ու գլխավոր օպերատոր Մերուժան Հայրապետյանը: Առաջին փուլում սցենարի ճշգրտումն էր, նկարահանումների հարթակների, պոտենցյալ զրուցակիցների ցանկերի ճշգրտումը: Խնդիրը շարժման համընդհանուր բնույթը ցույց տալն էր, ինչը եւ եղել է իրականում: Ինքնավար մարզի շրջաններից յուրաքանչյուրում եւ մարզկենտրոնում՝ Ստեփանակերտում, 1980-ականների կեսերին արդեն ընթանում էին խմորումները, ընդհատակում ձեւավորվում էին խմբեր, խմբակներ: Խնդիրը այդ խճանկարը մեկ պատկերի մեջ ամբողջացնելն էր: Ըստ այդմ՝ նկարահանումներ են կատարվել Մարտակերտի, Ասկերանի, Հադրութի եւ Մարտունու շրջաններում, ինչպես նաեւ մայրաքաղաք Ստեփանակերտում, այն վայրերում, որտեղ առաջին միտինգներն են կայացել: Նկարահանումներում մոտ 30 անձ է ներգրավվել՝ 1988-ի ակտիվիստներից: Հենց նրանց խոսքերով է կառուցվել ֆիլմի հիմնական կմախքը: Ընդ որում, միմյանցից անկախ՝ նրանք իրենց հիշողություններով լրացրել, շարունակել են իրար՝ ամբողջացնելով պատկերը եւ անուղղակի հաստատելու մյուսների խոսքը: Հենց այստեղից էլ ծնվել է ֆիլմի վերնագիրը՝ «Շարժում 88. 30 տարի անց՝ առաջին ձեռքից»:

Արցախյան շարժումից 3 տասնամյակ անց հայկական երկրորդ հանրապետությունում տիրող տոնական տրամադրությունը Արցախի Հանրային Հեռուստատեսությունը լուսաբանել է ամբողջ թիմով, ընդգրվել են տեղեկատվական, վերլուծական բոլոր հաղորդաշարերը: Թեմայի շուրջ հարցազրույցներ են պատրաստվել, որոշները հեռարձակվել են ուղիղ եթերում՝ Ողջույն, Արցախ հեռուստանախագծի շրջանակներում:

Շարժման 30-ամյակի միջոցառումները, որոնք համակարգված էին պետական մակարդակով և իրականացվել են ամբողջ հանրապետությունում, ոչ միայն հիշողություններն են թարմացրել: Անհրաժեշտ էր սերունդների մեջ մարմնավորել պայքարի ոգին, որպես բաց դաս՝ եվս մեկ անգամ կրթելու, դաստիարակելու, ապագան ավելի ճիշտ կառուցելու հրամայականով: Արցախի Հանրային Հեռուստատեսությունն հենց այդ ուղղությամբ է շարժվել: Իրականացնելով պտական քաղաքականությունը՝ հավատարիմ է մնացել ժուռնալիզմի համար ընդունելի այնպիսի որակական չափանիշներ, ինչպիսին բազմազանությունն է, հավասարկշռվածությունն ու թափանցիկությունը: